ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայկական ԽՍՀ ժողովրդական վերահսկողության կոմիտեն հաղորդում է. հոկտեմբերի 23-ին ադրբեջանական երկաթուղով Հայաստան է եկել. Նորաշենի հանգույցով՝ 15 գնացք 789 վագոնով, իսկ Իջևանի հանգույցով՝ վեց շարժակազմ 322 վագոնով:

Դրանք հանրապետություն են բերել 122 ցիստեռն նավթամթերք, այդ թվում՝ 58-ը բենզին, ինչպես նաև 153 վագոն տնակներ, 103 վագոն շինանյութ, 56 վագոն ցեմենտ, 9 վագոն համակցված կեր, 22 վագոն արդյունաբերական ապրանք: Պարենային մթերքներից եղել են 5 վագոն շաքար, 3 վագոն պահածո, 10 վագոն կարտոֆիլ և այլն:

Անդրկովկասյան երկաթուղով եկել է 11 գնացք՝ 300 վագոնով: Դրանք բերել են 22 ցիստեռն բենզին, 146 վագոն շինանյութ, 10-ական վագոն տնակներ ու ցեմենտ և այլն:

Ինչպես հայտնի է, օրերս ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նիստում նշվեց, որ երկրում արտակարգ իրադրություն է ստեղծվել ժողովրդատնտեսական բեռների փոխադրումների հարցում: Ներկայումս այդ պրոբլեմը ամենակարևորն է Հայկական ԽՍՀ-ի համար:

Անդրկովկասյան երկաթուղու Երևանի բաժանմունքում հայտնեցին, որ չնայած Հայաստանի և Ադրբեջանի երկաթուղային կապի վերահաստատմանը, հարկ է ասել, որ մինչև օրս ադրբեջանական կողմը խախտում է գրնացքների երթևեկության և կազմման գրաֆիկը: Դրա հետևանքով վերջին ժամանակներս հանրապետությունը չի ստացել տասնյակ շարժակազմեր: Միևնույն ժամանակ հոկտեմբերի սկզբից Վրաստանից «կյանքի ճանապարհով» Հայաստան է եկել պլանով նախատեսվածից 65 գնացքով ավելի:

Հարկ է նշել, որ առաջվա պես նավթամթերքների ստացումը չի անցնում նորմայի տասը տոկոսից: Ադրբեջանում շատ երկաթգծեր լի են բենզինի, տարբեր վառելիքատեսակների ցիստեռններով, պարենային և այլ բեռներով:

Երկրի ճանապարհներին կանգնեցված է Հայաստանի համար նախատեսված բեռներով լի 21300 վագոն:

Հանրապետության կայարաններում տակավին դանդաղ են վագոնների բեռնաթափման տեմպերը: Նորմայի 2000 վագոնի փոխարեն Երևանի բաժանմունքը օրական բեռնաթափում է 1500—1600 վագոն:

Մինիստրությունների, գերատեսչությունների, շինարարական կազմակերպությունների ու ձեռնարկությունների հետ համատեղ ներկայումս միջոցներ են ձեռնարկվում բեռությունների վերացման և վագոնների մշակման բարելավման համար:

(Արմենպրես)